

հարցումներուն յաւ պատասխանեց. իրենց
ուսուցումն ինն Օր. Հռիփսիմէ Գօշեանը
Չերմապէս շնորհաւորեցինք այս ցայտուն
յաջողութեան համար: Տղոց պահապան
հրեշտակն էր Օր. Հռիփսիմէ Բարասդան-
եան, Քիֆիլոսի:

Մեկնելու ժամն էր եկած. այսօրուան
տպաւորութիւնն ուրիշ ազդումով մը
չեղծելու համար Աշտարակ գիւղը չգա-
ցինք և որոշեցինք Վաղարշապատ դառ-
նալ, Վաղարշապատի արդի դպրեմանքը
այցելլ, որ է Գէորգեան ձեռնարանը: Կող-
կասի մէջ ամենուրեք հին օրինակելի
կեանքն է որ կ'ընթացարի. այդ հայրենի
գգուելի վայրերուն մէկ ծայրէն միւսը կը
սաւառնի Հայուն ոգին, Ս. Մեսրոպը՝ որ
Հայկական Վերածնութիւնը սաղմուաւոր-
ած է:

Ես կ'փափաքիմ որ այդ կողմի Հա-
յութեան Ս. Մեսրոպը պարունակող Օ-
շականը՝ որ մեծագումար Գղբ-ց-կ-ն Ֆ-ն-դը
կ'ընի՝ ըլլայ նաև ուրիշ-իք այս կողմի և
ամբողջ Հայութեան Օշականը, այսինքն
մեր մէջն ալ լաւագոյն դաստիարակու-
թեան և քաղաքակրթութեան նոր կեան-
քը յառաջ բերէ նոյն դպրոցական ֆ-ն-դին
անումով:

Եթէ հրէական ազգը սրբութիւն
սրբութեանցօր ունէր, Հայ Ազգը ո՛չ մի-
այն սրբութիւն սրբութեանցօր, այլ նաև
բարձրութիւն բարձրութեանցօն ունի:

Բայց ես այդ բարձրութիւնն աւելի
Ս. Մեսրոպի գերեզմանին մէջ տեսայ՝
ուրկէ կ'արտածորէր «հոս ի մահուանէ ի
կեանս» . . . :

Յեղին վերակենդանութեան սեղանն
էր այն:

Ուրեմն, Հայ տառերու գիւտի 1,500ամ-
եակին և Հայ տպագրութեան 400ամեա-
կին առթիւ, համբոյր այդ յարութեան,
այդ բարձրութեան՝ որ, լս'ւ հասկնանք,
Մասիսի բարձրութեան պէս անմատչելի
չէ, և որ պիտի բերէ մեր յուսարեր ու
յուսարեր ապագան: